ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

Ս. Էջմիածին

Զերդ Սրբության ծննդյան տարեդարձի առթիվ ուրախությամբ հղում ենք Զեզ Մեր անկեղծ շնորհավորանքներն ու լավագույն մաղթանքները քաջառողջության և երջանկության՝ աղոթելով Տիրոջը, որ օրհնի Զեր սուրբ առաքելությունը ի ծառայություն Քրիստոսի Եկեղեցու և Աստծու կողմից Զեզ վստահված հավատացյալների:

Եղբայրական սիրո ողջագուրումով ի Տեր և Փրկիչ մեր Հիսուս Քրիստոս՝

. **ԹԵՈԿՏԻՍՏ**
ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ

Բուխարեստ,
17 սեպտեմբերի 1988 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Զերդ Սրբություն,

Այս օրերին, երբ Դուք տոնում եք Ձեր ծննդյան 80-ամյակը, մենք, սիրով ի Տեր, մտքով տեղափոխվում ենք Ձեզ մոտ, որպեսզի մտնենք Ձեր հոբելյանական ուրախությունների մեջ և շնորհավորենք Ձեզ՝ հայցելով Ձեզ համար Տիրոջից քաջառողջություն և երկար տարիների արդյունաշատ գործունեություն:

ՄԱՔՍԻՄ
ԲՈՒԼՂԱՐ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ

Սոֆիա,
14 սեպտեմբերի 1988 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձեր ծննդյան 80-րդ տարեդարձի առթիվ հղում եմ Ձեզ իմ ջերմ շնորհավորանքներն ու աղոթքները: Նաև սրտագին ողջույններ եմ հայտնում Ձեզ և Հայ Առաքելական Եկեղեցուն Ձեր գահակալության առաջիկա տարեդարձի առթիվ:

ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻ
ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Լոնդոն,
16 սեպտեմբերի 1988 թ.

ԶԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Սիրելի եղբայր ի Քրիստոս,

Շնորհավորում եմ Ձեզ Ձեր ծննդյան 80-րդ տարեդարձի առթիվ: Ամբողջ սրտով ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և Աստուծո օրհնությունը Ձեր աշխատանքում ի նպաստ սուրբ Եկեղեցուն:

Ես լավագույն հույսեր ունեմ մեր՝ քրիստոնյաներիս ընդհանուր էկումենիկ աշխատանքի հետագա զարգացման համար: Ես հիշում եմ Ձեզ իմ աղոթքներում՝ Ձեր կյանքի այս պայծառ հանգրվանին: Ցանկանում եմ Ձեզ Աստուծո շնորհն ու օրհնությունը:

ԿՈՒՆՈ ՊԱՅՈՒԼԱ
ԷՍՏՈՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Տալլին,
20 սեպտեմբերի 1988 թ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՂԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Սրտանց շնորհավորում ենք Ձեզ ութսունամյա Ձեր փառապանծ հոբելյանի առթիվ: Մաղթում ենք աստվածային օրհնություններ ձեր՝ Քրիստոսի Եկեղեցուն, և հետագա հաջողություններ համայն մարդկության խաղաղությանը և մեր հայրենիքի բոլոր ազգերի ու աշխարհի ժողովուրդների բարեկամությանը նպաստող Ձեր ծառայությանը:

«Բայց որ սպասեն Տեառն՝ նորոգեսցին զօրութեամբ» (Եսայի Խ 41):

Անկեղծ ողջույններով՝

ԼՈԳՎԻՆԵՆԿՈ
ՍՍՀՄ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՊՏԻՍՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա,
27 սեպտեմբերի 1988 թ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՂԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ընդունեցեք իմ խոնարհ որդիական շնորհավորանքները Ձեր կյանքի փառապանծ հոբելյանի, ինչպես նաև կառավարական բարձր պարգևով և Խաղաղության Սովետական Ֆոնդի ոսկե մեդալով պարգևատրվելու առիթով: Թույլ տվեք ի սրտե ցանկալ Ձեզ, Ձերդ Սրբություն, հոգևոր և մարմնավոր ուժերի ամրություն, Աստուծո օգնականությունը Ձեր սրբազան ծառայության գործում Ս. Եկեղեցու մեջ՝ հուրախություն և ի մխիթարություն Ձեր բազմամիլիոն աստվասածեր հոտի և Ձերդ Սրբությանը անկեղծորեն հարգող բոլոր մարդկանց:

Ձերդ Սրբությանը խոնարհաբար հարգող և աղոթարար՝

ԱԼԵՔՍԻ
ԼԵՆԻՆԳՐԱԳԻ ԵՎ ՆՈՎԳՈՐՈԳԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

Կուրեմյան,
22 սեպտեմբերի 1988 թ.

ՆԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Զերդ Սրբություն, Սրբազնագույն Տեր,

Զեր կյանքի նշանակալից տարեթվի՝ Զեր ծննդյան ութսունամյակի առթիվ խնդրում եմ ընդունել որդիական շնորհավորանքներս ու սրտագին մաղթանքներս քաջառողջության և բարեհաջողության:

Սիրով առ Աստված՝

ՊԻՏԻՐԻՄ
ՎՈԼՈԿՈԼԱՄԻ ԵՎ ՅՈՒՐԵՎԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

Մոսկվա,
19 սեպտեմբերի 1988 թ.

ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Խորին հարգանքով շնորհավորում ենք Զերդ Սրբությանը Զեր ծնընդյան ութսունամյակի առթիվ: Զերմորեն աղոթում և մաղթում ենք Զեզ կորով, երկարակեցություն և Զեր ապագա գործունեությանը՝ աստվածային օգնականություն:

Սրտագին սիրով ի Քրիստոս՝

ՅՈՒՎԵՆԱԼԻ
ԿՐՈՒՏԻՑԿԻԻ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

Մոսկվա,
17 սեպտեմբերի 1988 թ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Զերդ Սրբություն,

Զեր ութսունամյա հոբելյանի նշանակալից օրը ընդունեցեք Մոսկվայի հոգևոր դպրոցների պրոֆեսորների և սաների բարեմաղթությունները Զեր քաջառողջության և Զեր հավատացյալ ժողովրդի ծառայության գործում Զեր հետագա հաջողությունների համար:

ԱԼԵՔՍԱՆԴՐ
ԴՄԻՏՐՈՎԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՌԵԿՏՈՐ

Զագոր,
20 սեպտեմբերի 1988 թ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՋԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Զերդ Սրբություն, թանկագին և ողորմած Տեր,

Անկեղծորեն և որդիական ջերմ սիրով շնորհավորում եմ Ձեզ Ձեր ծննդյան ութսունամյակի և կառավարական բարձր պարևով՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվելու առթիվ: Աղոթելով մաղթում եմ Ձեզ հոգևոր և մարմնական ամրություն, երկար տարիների կյանք՝ հուրախություն Հայ և բոլոր ուղղափառ Եկեղեցիների ս ի բարօրություն մեր թանկագին հայրենիքի:

Անխախտ սիրով մնում ի Ձեզ՝

ԴԱՎԻԹ
ՍՈՒԽՈՒՄԻ ԵՎ ԱԲԽԱԶԻԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

Մոսկվա,
22 սեպտեմբերի 1988 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՋԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Նս միանում եմ այն մարդկանց, որոնք սիրով և հարգանքով են Ձեզ շրջապատել, և ցանկանում եմ Ձեր ութսունամյակի առիթով ամենաանկեղծ շնորհավորանքներ հղել Ձերդ Սրբությանը:

Մաղթում եմ Ձեզ երկար տարիների կյանք և մնում եմ աղոթող ձեր եկեղեցիների և ձեր ժողովրդի բարգավաճման համար:

ՆԻԿՈԼԱՅԵ
ԲԱՆԱՏԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

Բանատ (Ռումինիա),
21 սեպտեմբերի 1988 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՋԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձեր ծննդյան տարեդարձի օրը երախտագիտական խոր զգացումով մտածում եմ Ձերդ Սրբության, Հայ Եկեղեցու և համայն հայ ժողովրդի մասին:

Ատված Ձեր առաքելությունը դարձել է միության և հաշտության խորհրդանիշ: Թող նա իր Սուրբ Հոգու զորությամբ մշտապես ուղեկցի Ձեզ գալիք տարիներին:

ԼՈՒԿԱՍ ՎԻՇԵՐ
ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Բեռն,
23 սեպտեմբերի 1988 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳ. ԱՐԽԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Անդրկովկասի մուսուլմանների և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձերդ Սրբությանը՝ հայրենիքի բարձր պարգևին արժանանալու և ուրսունամյա հոբելյանի սոթիվ: Մաղթում եմ Ձեզ առողջություն և երկար տարիների կյանք՝ ի փառս մեր սիրելի հայրենիքի բարգավաճման:

ՇԵՅԽ ՈՒԼ ԻՍԼԱՄ ՓԱՇԱ-ԶԱԴԵ

Բաքու,
21 սեպտեմբերի 1988 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա

Ս. Էջմիածին

Աստուծո լավագույն օրհնությունները Ձեր ծննդյան տարեդարձի առթիվ: Ես հիշում եմ Ձեզ իմ աղոթքներում և միշտ պիտի հիշեմ Ձեր վեհանձն հյուրընկալությունը: Տիկին Շնեյերը միանում է ինձ՝ մաղթելով երջանիկ ծննդյան տարեդարձ:

ՌԱԲԲԻ ԱՐԹՈՒՐ ՇՆԵՅԵՐ

Նյու Յորք,
21 սեպտեմբերի 1988 թ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձեր 80-ամյակի առթիվ մաղթում ենք Ձերդ Սրբությանը քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր գործունեություն՝ ուղղված համընդհանուր խաղաղության ամրապնդման, հայապահպանության, Հայրենիք-Սփյուռք կապերի հետագա մերձեցման նպատակներին: Թույլ տվեք Ձերդ Սրբությանը հղել մեր ամենաջերմ շնորհավորանքները՝ ՍՍՀՄ պետական բարձր պարգև ստանալու կապակցությամբ:

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՍՍՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ

Երևան,
21 սեպտեմբերի 1988 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տեր, կյանքը արդար ու անբեկանելի կանթեղ է աշխարհաշինության և խաղաղության ասպարեզում, և մենք անանձնական հպարտություն ենք ապրում, որովհետև Դուք համայն հայության Հովվապետն եք: Ձեր մտածումներն ու խոսքերը մարդու կատարելության, հայ ոգու հարատևության, մեր ժողովրդի հույզերն ու խռովքը ողջախոհության հունով ծավալելու հորդորներ են, որովհետև Դուք ճշմարտապես հայ եք, համակ մարդասեր ու գթասիրտ: Մեր կրթական ու մշակութային օջախները միշտ զգում են Ձեր Աջի մշտական ջերմությունը, որովհետև Դուք ոգեղեն մայրենիի և հայոց նվիրական մասունքների հավերժ պահպանիչն եք: Թող հար և հարատև անթեղված մնան Ձեր հոգում մարդասիրության, ազգասիրության առաքինի կրակները: Ձեզ ամենայն առույգություն և քաջառողջություն եմ մաղթում:

Ս. ՀԱԽՈՒՄՅԱՆ
ՀՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐ

Երևան,
21 սեպտեմբերի 1988 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Մեծարգո Վեհափառ,

Խնդրում եմ ընդունել իմ անկեղծ շնորհավորանքները Ձեր փառապանծ հոբելյանի՝ Ձեր ծննդյան ութսունամյակի կապակցությամբ: Ձեր կրոնական, հասարակական և հայրենասիրական անխոնջ գործունեությունը մեծ հավանության է արժանանում մեր երկրի և արտասահմանի լայն հասարակայնության կողմից: Ձեր մարդասիրական ջանքերը խաղաղասեր ուժերի համախմբման գործում հավանության և սատարման են արժանանում: Նոր մտածողության դարաշրջանում Ձեր հետագա խաղաղասիրական դիրքորոշումը մեծ ավանդ կբերի ազգամիջյան հարաբերությունների կարգավորման գործում: Ձեզ համար նշանավոր այս օրը ընդունեցեք իմ խորին հարգանաց հավաստիքը, ինչպես նաև Ձեր քաջառողջության, երկար տարիների կյանքի և Ձեր ցանկությունների կատարմանն ուղղված իմ մաղթանքները:

Է. ՀԱՅԿԱԶՅԱՆ
ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Մոսկվա,
20 սեպտեմբերի 1988 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տեր,

Ձեր ծննդյան 80-ամյակի առթիվ հլում եմ Ձեզ ամենաջերմ մաղթանքներ անձամբ իմ և ամբողջ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կողմից: Ձեր արդյունավետ ու երկարատև աշխատանքը, ուղղված հայ ազգի բարօրությանը և նրա մշակույթի զարգացմանը, այժմանացել է հայ մտավորականության ընդհանուր ճանաչման: Ձեր ծառայությունները Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում արժևանացել են ամբողջ հայության հավանությանը: Ժողովուրդը ճանաչում է Ձեզ որպես բարձր առաքինությունների տեր Հովվապետի, որը անընդհատ մտահոգված է ազգի ճակատագրով:

Դուք շատ բան եք արել խաղաղության ազնիվ գործի համար:

Ցանկանում ենք Ձեզ երկար կյանք և ամուր առողջություն:

Մեր համակրանքը միշտ Ձեզ հետ է:

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊՐԵԶԻԴԵՆՏ

Երևան,
19 սեպտեմբերի 1988 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Վեհափառություն,

Մաշտոցի անվան Հին Ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի տնօրենությունը, Գիտական խորհուրդն ու ողջ անձնակազմը ջերմորեն շնորհավորում են Ձեր պանծալի 80-ամյակը:

Դուք Ձեր գործունեության անկյունաքարը զետեղեցիք ճիշտ խաչմերուկի կենտրոնում, ուր կիտվում էր հայ ժողովրդի բազմաթիվ ու բազմազան խնդիրների ու մտահոգությունների ամբողջությունը: Ի պատիվ Ձեզ և ի ցնծություն ողջ ազգիս հայոց Դուք պատմական իրագործումների հասաք Ձեր մեծ ու դժվարին ծրագրերի բոլոր շառավիղներում

Խորապես ավանդապահ ու նախանձախնդիր մեր ժողովրդի հոգևոր-ազգային նկարագրի հանդեպ՝ Դուք Հայ Եկեղեցին դրիք համաշխարհային քրիստոնեական մեծ Եկեղեցիների իրավահավասար պատվանդանի վրա՝ մեծապես ընդարձակելով նաև Հայաստանի և հայ ժողովրդի բարի համբավի միջազգային ճանաչման սահմանները:

Ջատագովելով և պաշտպանելով ժողովուրդների ճշմարիտ, անսակարկելի բարեկամությունը, աշխարհի վրա կայուն և արդար խաղաղությունը, Դուք առավելագույնս իրագործեցիք Ձեր վսեմ առաքելությունը:

Հայ ժողովրդի համար չափազանց պատասխանատու այս օրերին, Դուք հնչեցրիք Ձեր հուզումնալից ձայնը, հայրական հորդորը, հայրապետական իմաստուն պատգամը՝ արժանանալով բոլորի երախտալից գնահատանքին։

Մաշտոցյան Մատենադարանը Ձեզ համարում է Հայ Եկեղեցու այն երախտավորներից, որոնք բախտորոշ հոգատարություն են ցուցաբերել հայ մտքի բոլոր պայծառ արարումների, նամանավանդ հայ ձեռագրական ժառանգության նկատմամբ։

Ձերդ Վեհափառություն, թույլ տվեք վերստին մեկ անգամ շնորհավորել Ձեր հոբելյանը և ցանկալ Ձեզ երկար կյանք ու քաջառողջություն։

Խորին հարգանքով՝

Ս. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ

Երևան,
30 սեպտեմբերի 1988 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբության ծննդյան և գահակալության այս երջանիկ տարեդարձի առիթով Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահը, վարչական խորհուրդը, իմ կինն ու ես, ինչպես նաև հիմնարկության հայկական գործերի բաժինը արտահայտում ենք մեր սրտագին մաղթանքները քաջառողջության և երկար, խաղաղ ու բարգավաճ կյանքի։

Որդիական հարգալից զգացումներով՝

ՌՈԲԵՐՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ

Լիսաբոն,
15 սեպտեմբերի 1988 թ.